Հավելված N 5
ՀՀ կառավարության 2023 թվականի
հունվարի 19-ի N 79 - Ն որոշման

Կ Ա Ր Գ

ՕՏԱՐԵՐԿՐՅԱ ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ԱՆՁԱՆՑ ՄԱՐԴԱՏԱՐ-ՏԱՔՍԻ ԱՎՏՈՄՈԲԻԼ-ՆԵՐՈՎ ՈՒՂԵՎՈՐԱՓՈԽԱԴՐՈՒՄՆԵՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ԲՆԱԳԱՎԱՌՈՒՄ ԼԻՑԵՆԶԱՎՈՐՄԱՆ ԵՆԹԱԿԱ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆ ԻՐԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅԱՆ ՏՐԱՄԱԴՐՄԱՆ

1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. Սույն կարգով սահմանվում են օտարերկրյա պետությունների իրավաբանական անձանց մարդատար-տաքսի ավտոմոբիլներով ուղևորափոխադրումների կազմակերպման բնագավառում տվյալ պետության օրենսդրությամբ՝ համապատասխան գործունեության տեսակով զբաղվելու իրավունքը հավաստող փաստաթղթի առկայության դեպքում անհատ ձեռնարկատերերի և կազմակերպությունների կողմից մարդատար-տաքսի ավտոմոբիլներով ուղևորափոխադրումների կազմակերպման թույլտվության տրամադրմանը ներկայացվող պայմաններն ու պահանջները:

2. Սույն կարգի գործողությունը տարածվում է Եվրասիական տնտեսական միության, Եվրոպական միության անդամ երկրների, ինչպես նաև Ամերիկայի Միացյալ Նահանգների, Կանադայի, Հարավային Կորեայի, Չինաստանի Ժողովրդական Հանրապետության, Ճապոնիայի, Մեծ Բրիտանիայի և Հյուսիսային Իռլանդիայի Միացյալ Թագավորության, Արաբական Միացյալ Էմիրությունների, Վրաստանի, Իրանի Իսլամական Հանրապետության իրավաբանական անձանց վրա (այսուհետ՝ կազմակերպություն):

3. Թույլտվությունը տրամադրում է Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարությունը (այսուհետ՝ լիցենզավորող մարմին)՝ համաձայն N 3 ձևի:

4. Թույլտվության տրամադրումից հետո գանձվում է պետական տուրք՝ «Պետական տուրքի մասին» օրենքով սահմանված կարգով և չափով: Կազմակերպությունն օրենքով

սահմանված պետական տուրքը պարտավոր է վճարել ոչ ուշ, քան թույլտվության տրամադրման հայտը բավարարելուց հետո՝ 5 աշխատանքային օրվա ընթացքում:

5. Թույլտվությունը տրամադրվում է անժամկետ:

6. Թույլտվության հետ տրամադրվում է առնվազն մեկ ներդիր:

7. Պահանջվող բոլոր փաստաթղթերը պետք է լինեն հայերենով:

2.ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅԱՆ ԵՎ ՆԵՐԴԻՐՆԵՐԻ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ԿԱՐԳԸ

8. Թույլտվություն ստանալու համար կազմակերպությունը լիազոր մարմին է ներկայացնում հայտ՝ համաձայն N 1 ձևի, կցելով տվյալ պետության օրենսդրությամբ համապատասխան գործունեության տեսակով զբաղվելու իրավունքը հավաստող փաստաթղթի բնօրինակի պատկերամուտով անցկացված տարբերակը և հայերեն թարգմանությունը նոտարական հաստատմամբ:

9. Թույլտվության կամ դրա կրկնօրինակի տրման, վերաձևակերպման, գրանցամատյաններից այլ անձանց տեղեկությունների տրամադրման համար գանձվում է պետական տուրք՝ օրենքով սահմանված կարգով և չափով:

10. Կազմակերպության կողմից իրականացվող մարդատար-տաքսի ավտոմոբիլներով ուղևորափոխադրումներում ընդգրկված յուրաքանչյուր ավտոմոբիլի համար հատկացվում է ներդիր՝ համաձայն N 4 ձևի:

11. Ներդիր (ներդիրներ) ստանալու համար կազմակերպությունը ներկայացնում է հայտ՝ համաձայն N 2 ձևի, և սույն կարգի 12-րդ կետով սահմանված փաստաթղթերը:

12. Ներդիր (ներդիրներ) ստանալու համար կազմակերպությունը պետք է ներկայացնի՝

1) ավտոմոբիլի տեխնիկական անձնագրի (հաշվառման վկայագրի) պատճենը.

2) ավտոմոբիլի ուղեսրահում տեղադրված սակաչափիչի վերաբերյալ սակաչափիչի ստուգաչափման մասին իրավասու մարմնի կողմից տրված տեղեկանքի (եզրակացության) պատճենը, որում պետք է լինի նշում, թե տվյալ սակաչափիչը որ ավտոմոբիլի համար է ստուգաչափված:

13. Կազմակերպություններին թույլտվությունը և ներդիրը (ներդիրներ) տրամադրվում են լիցենզավորող մարմնի կողմից անհրաժեշտ փաստաթղթերն ստանալուց հետո 7

աշխատանքային օրվա ընթացքում՝ լիցենզավորման հանձնաժողովի եզրակացության հիման վրա:

14. Ներդիրը տրվում է մարդատար-տաքսի ավտոմոբիլի վարորդի նստատեղից դեպի դիմապակու ներքևի աջ անկյունում փակցնելու համար:

15. Ներդիրն ուժի մեջ է, եթե դրա և (կամ) համապատասխան թույլտվության գործողությունը չի դադարեցվել (կասեցվել):

16. Կազմակերպության կողմից որևէ ավտոմոբիլով այլևս ուղևորափոխադրումներ չիրականացնելու դեպքում տվյալ ավտոմոբիլին հատկացված ներդիրը հանձնվում է լիցենզավորող մարմին:

17. Կազմակերպության ավտոմոբիլի փոխարինումը և ներդիրի հատկացումն իրականացվում են սույն կարգի պահանջներին համապատասխան:

3. ՏԱՔՍՈՄՈՏՈՐԱՅԻՆ ՓՈԽԱԴՐՈՒՄՆԵՐՈՒՄ ՆԵՐԳՐԱՎՎՈՂ ԱՎՏՈՄՈԲԻԼՆԵՐԻՆ ՆԵՐԿԱՅԱՑՎՈՂ ՊԱՐՏԱԴԻՐ ՊԱՀԱՆՋՆԵՐԸ

18. Մարդատար-տաքսի ավտոմոբիլը պետք է ունենա՝

1) ուղեսրահում՝ ուղևորին տեսանելի մասում տեղադրված սակաչափիչ.

2) տանիքին՝ «ՏԱՔՍԻ» գրառմամբ կամ շախմատաձև դեղին և սև տարբերանշան.

3) ուղեսրահում՝ տաքսի-ծառայություն մատուցող կազմակերպության և տվյալ ավտոմոբիլի վարորդի մասին տեղեկատվություն (կազմակերպության անվանումը, հեռախոսահամարը, վարորդի անունը, ազգանունը).

4) թափքի կողային մասում և ուղեսրահում գնացուցակ, որն առնվազն պետք է ներառի՝ ուղևորափոխադրման նվազագույն արժեքը (առկայության դեպքում), ուղևորափոխադրման սակագինը, նստելավարձի և (կամ) սպասելավարձի մասին տեղեկատվություն (առկայության դեպքում):

19. Սակաչափիչը պետք է ստուգաչափվի կոնկրետ ավտոմոբիլի համար, կնքվի և ամրացվի այդ ավտոմոբիլին:

4. ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅԱՆ ՈՒԺԻ ՄԵՋ ՄՏՆԵԼԸ, ՎԵՐԱՁԵՎԱԿԵՐՊՈՒՄԸ, ԳՈՐԾՈՂՈՒԹՅԱՆ ԿԱՍԵՑՈՒՄԸ, ԴԱԴԱՐԵՑՈՒՄԸ ԵՎ ԿՐԿՆՕՐԻՆԱԿԻ ՏՐԱՄԱԴՐՈՒՄԸ

20. Թույլտվությունն ուժի մեջ է մտնում այն կազմակերպությանը պատշաճ ձևով հանձնվելու կամ ուղարկվելու օրվան հաջորդող օրվանից:

21. Թույլտվության և ներդիրների ձևաթղթերն ստորագրվում են Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարի կողմից և կնքվում նույն նախարարության՝ Հայաստանի Հանրապետության զինանշանի պատկերով և իր՝ հայերեն անվանմամբ կլոր կնիքով:

22. Թույլտվությունը վերաձևակերպվում է, գործողությունը կասեցվում, դադարեցվում է և կրկնօրինակը տրամադրվում է օրենքով սահմանված կարգով:

23. Թույլտվության գործողության դադարեցման մասին դիմումի հետ միասին լիազոր մարմին են ներկայացվում կազմակերպությանը տրամադրված թույլտվության բնօրինակը և ներդիրը (ներդիրները):

5. ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅԱՆ ԵՎ ՆԵՐԴԻՐԻ (ՆԵՐԴԻՐՆԵՐԻ) ՍՏԱՑՄԱՆ ՄԱՍԻՆ ՀԱՅՏԵՐԻ ՄԵՐԺՈՒՄԸ

24. Կազմակերպություններին թույլտվության և ներդիրի (ներդիրների) տրամադրման մասին հայտերը մերժվում են Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ և «Լիցենզավորման մասին» օրենքով սահմանված դեպքերում, ինչպես նաև, եթե ներկայացված փաստաթղթերի համաձայն ավտոմոբիլները չեն համապատասխանում սույն կարգի 19-րդ և 20-րդ կետով սահմանված պահանջներին:

Ձև N 1

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԵՎ ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

Հ Ա Յ Տ
ՕՏԱՐԵՐԿՐՅԱ ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ԱՆՁԱՆՑ ՄԱՐԴԱՏԱՐ-ՏԱՔՍԻ ԱՎՏՈՄՈԲԻԼՆԵՐՈՎ ՈՒՂԵՎՈՐԱՓՈԽԱԴՐՈՒՄՆԵՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅԱՆ ՏՐԱՄԱԴՐՄԱՆ

Հայտատու_____
(կազմակերպության անվանումը)

Գտնվելու վայրը _____
(կազմակերպության գտնվելու վայրը)

Կազմակերպության պետական գրանցման համարը _____

Թույլտվությունը տրամադրող երկիրը_____

Խնդրում եմ տրամադրել մարդատար-տաքսի ավտոմոբիլներով ուղևորափոխադրումների կազմակերպման թույլտվություն:

□ Կից ներկայացվում է մարդատար-տաքսի ավտոմոբիլներով ուղևորափոխադրումների կազմակերպման պետական տուրքի վճարման անդորրագիրը կամ պետական վճարումների էլեկտրոնային համակարգի կողմից գեներացված անդորրագիրը կամ անդորրագրի 20-նիշանոց ծածկագիրը □□□□□□□□□□□□□□□□□□□□ (լրացվում է պետական տուրքը նախապես վճարված լինելու դեպքում):

Նախապես ծանոթացել եմ տրանսպորտի ոլորտին առնչվող ՀՀ օրենքների և այլ իրավական ակտերի պահանջներին ու պարտավորվում եմ ապահովել դրանց կատարումը:

Հայտնում եմ, որ ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարություն ներկայացված փաստաթղթերում առկա տվյալները հավաստի են:

Հայտատու

_____
(պաշտոնը)

_____ _____
(անունը, ազգանունը) (ստորագրությունը)

_____ _____ 20 թ.

Ձև N 2

Հ Ա Յ Տ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ ՄԱՐԴԱՏԱՐ-ՏԱՔՍԻ ԱՎՏՈՄՈԲԻԼՆԵՐՈՎ ՈՒՂԵՎՈՐԱՓՈԽԱԴՐՈՒՄՆԵՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅԱՆ ՆԵՐԴԻՐԻ (ՆԵՐԴԻՐՆԵՐԻ) ՍՏԱՑՄԱՆ ՄԱՍԻՆ

Խնդրում եմ տրամադրել _____ ներդիր (ներդիրներ)՝ ներկայացված ավտոմոբիլների համար՝ Հայաստանի Հանրապետությունում մարդատար-տաքսի ավտոմոբիլներով փոխադրումներ իրականացնելու նպատակով:

Հայտատու_____

(կազմակերպության անվանումը և գտնվելու վայրը)

Լրացուցիչ տեղեկություններ_____

Նախապես ծանոթացել եմ տրանսպորտի ոլորտին առնչվող ՀՀ օրենքների և այլ իրավական ակտերի պահանջներին ու պարտավորվում եմ ապահովել դրանց կատարումը:

Կից ներկայացնում եմ գործող կարգի պահանջներով նախատեսված անհրաժեշտ փաստաթղթերը, որոնց իսկությունը հավաստում եմ:

Հայտատու _____ _____

(ստորագրությունը) (անունը, ազգանունը)

_____ _____ 20 ____թ.

Ձև N 3

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՏԱՐԱԾՔԱՅԻՆ
ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԵՎ ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԾ N 000

Հայաստանի Հանրապետությունում մարդատար-տաքսի ավտոմոբիլներով ուղևորափոխադրումների կազմակերպում

Տրվում է _____
(իրավաբանական անձի անվանումը և գտնվելու վայրը, անհատ ձեռնարկատիրոջ համար՝ անունը, ազգանունը և բնակության վայրը)

Թույլտվության գործողության ժամկետը անժամկետ

Թույլտվություն տալու ամսաթիվը ___ _____

ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարար _____
(ստորագրությունը) (անունը, ազգանունը)

Կ.Տ.

<u>Ձև N 4</u>

Դիմերես

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԵՎ ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

Թույլտվություն
N
Ներդիր N 00000

Դարձերես

Հայաստանի Հանրապետությունում մարդատար-տաքսի ավտոմոբիլներով ուղևորափոխադրումների կազմակերպում

(իրավաբանական անձի անվանումը կամ անհատ ձեռնարկատիրոջ անունը, հայրանունը, ազգանունը)

Ավտոմեքենայի մակնիշը
Հաշվառման համարանիշը
Նույնականացման համարը (VIN)
Սակաչափիչի մակնիշը և անհատականացման համարը
Ներդիրի տրման օրը

ՀՀ տարածքային կառավարման
և ենթակառուցվածքների նախարար անունը, ազգանունը
Կ.Տ.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱՊԵՏԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ՂԵԿԱՎԱՐ Ա. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

20.01.2023
ՀԱՎԱՍՏՎԱԾ Է
ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ
ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅԱՄԲ